# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Վարդահովիտ համայնք «08» հուլիսի 2016թ. ժամը 12:00

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վարդահովիտ համայնքի «ՀՀՎՁՄՎՀ-ՊԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 նիստի

Նիստին մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Հակոբյան

Հանձնաժողովի անդամներ՝ Է. Պռազյան

Խ. Գյուլնազարյան

Գ. Կարապետյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Հովհաննիսյան

Օրակարգում - **«ՀՀՎՁՄՎՀ-ՊԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հայտերի բացման մասին:**

Զեկուցող՝ Ս. Հակոբյան

Հայտերի բացման նիստին հանձնաժողովի նախագահ Սանիկ Հակոբյանը հայտարարեց գնման առարկայի նախահաշվային գինը, որը կազմում է 14170000 (տասնչորս միլիոն մեկ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ:

Գնային առաջարկ պարունակող ծրարները բացվել են Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վարդահովիտի համայնքապետարանում՝ Վարդահովիտ համայնք փողոց 2 շենք 5 հասցեում:

Հանձնաժողովն ընդունեց ի գիտություն, որ

ա) Հայտ է ներկայացրել միայն 1(մեկ) մասնակից.

| ՀՀ | Անվանումը | Հասցեն | ՀՎՀՀ | Չափաբաժնի համարը |
|---|---|---|---|---|
| 1 | «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ | ք. Եղեգնաձոր Ալավերդյան 2 | 08900039 | 1 |

բ) Մասնակցի ներկայացրած գինը.

| ՀՀ | Մասնակցի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Ներկայացրած գնային առաջարկը | | | |
| | | Ինքնարժեք (տառերով և թվերով) | Շահույթ (տառերով և թվերով) | ԱԱՀ (տառերով և թվերով) | Առաջարկված ընդհանուր (տառերով և թվերով) |
| 1 | «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ | 11242800 (տասնմեկ միլիոն երկու հարյուր քառասուներկու հազար ութ հարյուր) | 562140 (հինգ հարյուր վաթսուներկու հազար մեկ հարյուր քառասուն) | 2360988 (երկու միլիոն երեք հարյուր վաթսուն հազար ինն հարյուր ութսունութ) | 14165928 (տասնչորս միլիոն մեկ հարյուր վաթսունհինգ հազար ինն հարյուր քսանութ) |

գ) Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը արձանագրեց, որ հայտ ներկայացրած մասնակցի ծրարը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետի 4)-րդ և 5)-րդ ենթակետով՝ «ՀՀՎՁՄՎՀ-ՊԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգի

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Գնային առաջարկով առաջին տեղը ճանաչել «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ին:
2. «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ին առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:
3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել հարցում «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:
4. «ՀՀՎՁՄՎՀ-ՊԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգի փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը ժամը 12:00-ն:

*Որոշումն ընդունվել է՝ 4/չորս/ կողմ, 0/զրո/ դեմ ձայներով*

Հանձնաժողովի նախագահ՝ __________ Ս. Հակոբյան
Հանձնաժողովի անդամներ՝ __________ Է. Պռազյան
__________ Խ. Գյուլնազարյան
__________ Գ. Կարապետյան
Հանձնաժողովի քարտուղար՝ __________ Մ. Հովհաննիսյան